չեւ Մեծ Զաբ գետը Ճուլամերկի մօտ եւ Բարադոստի շրջանում՝ Ատրպատականի մէջ։

Է. դարում որպէս Պարսկաստանի (Ատրպատականի) սահման դիտւում էր Երասխ գետը, որ սակայն չփոթելու չէ այժմեան Երասխի (Արաքս) հետ։ Հաւանաօրէն նա ներկայիս Բարադոստին է համապատասխանում, որն եւ Նազլու-սու գետի վտակներից մէկն է։

Ե. դարում Բ. Ա. Թուր-Աբտինը Հայաստանի մասն էր կազմում, մինչ Ե. դարու սկզբին պաքօտները մատիէնցիների (Ուրմիոյ լճի ափին) եւ սասպերցիների (յետոյ՝ Ճորոխի ակերքին) հետ միասին առանձին հարկային շրջան էին կազմում, իսկ այդ պարօտներին էլ, որոնք ակնյայտնօրէն Ուրարտու պետութեան հին անունն են պահել, մենք ուրիշ տեղ չէ որ պիտի որոնենք քան այն երկրամասում, որ յետոյ էլ նրանց անունը պահեց, այն է՝ յետագայի Այրարատ նահանգում, որ իր սահման ների մէջ է առնում ամենից առաջ Երասխի (Արաքս) դաշտը՝ Արմաւիր, Արտաշատ, Վաղարշապատ եւ Դուին մայրաքաղաքով մէկտեղ։

Այսպիսով՝ հայերը Երասխի հովիտն են մտել միայն Ե. դարու ընթացքում եւ հաւանօրէն՝ Տարօնից գալով։

Այս նշանակում է, որ հայերը առաջին հերթին երկրի դաշտային վայրերն են գրաւել ու նստել, որոնք շատ էլ չեն Հայաստանում եւ ցրուած են լեռների մէջ։ Եւ եթէ քարտէսի վրայ մի ակնարկ նետելու լինենք, կը տեսնենք, որ հայերը ամենուրեք նախ եւ առաջ ռազմագիտական կէտերն են գրաւել։

* * *

Աստծներից հետեւում է, որ հայերը, մինչեւ յետագայ պատմական ժամանակների սկիզբն էլ նօսր բնակութիւն ունենալով Հայաստանում, չէին կարող այդ երկիրը, ուժով եւ կարճ ժամանակում նուաճած լինել։ Ամենայն հաւանականութեամբ մեդացիներն են նրանց տեղաւորել երկրի կարեւորագոյն կէտերում, որպէս զինուորական գաղութներ։

Հայերը գիւղացի, հողագործ ժողովուրդ էին եւ բնիկների ուրարտուցիների նման ազգային մեծ պետութիւն ունեցած չլինելով՝ վստահելի յենարաններ էին նոր իշխանութեան համար ընդդէմ աւազակարարոյ եւ մշտական ապստամբութեանց հետամուտ լեռնական ցեղերի։

Այս բոլորով մէկտեղ՝ երկրի բնիկ ժողովուրդը արմատախիլ չեղաւ միանգամից, այլ լեռները քաշուելով՝ այնտեղ էլ պահեց իր գոյութիւնը։ Հայաստանի հիւսիսային մասը որոշ ժամանակ դեռ մնաց խալիբների, մոսքերի եւ խալդերի ձեռին։ Անգամ Կարնոյ (Էրզրում) եւ Դերջանի շրջանները հազիւ Բ. դարում Բ. Ա. հայացուեցան։ Բայց նաեւ հարաւում պահուեցին Հայաստանի նախաբնիկների մնացորդները։։

Աւելին դեռ. Ուրարտու անունը շարունակեց ապրիլ ոչ միայն Այրարատ նահանգում, այլ եւ երեք ուրիշ շրջաններում։

1. Տակաւին Քրիստոսից յետոյ Է. դարում Տիգրիսի ակունքներում տարածուող Հանձիթ գաւառում մի ժողովուրդ էր ապրում, որ ամենաքիչը դեռ Դ. դարում իր սեփական լեզուն ունէր. մի լեզու, որ ոչ հայերէն էր, ոչ էլ ասորերէն։ Ասորիները նրանց Օրթայացիք էին անուանում։ Այդ անունն էլ ծագում է Օրարտ (կովկասեան հնչումով), այսինքն՝ Ուրարտու ձեւից։ Իսկ այդ անունով ասորիները յատկանշում են առհասարակ Տաւրոսի նախաբնիկներին — Տիգրիսի ակունքներից սկսած մինչեւ Բաղէշի գաւառը։ Նրանց մի մասը, որ ապրում էր Նիբրկերտից (Միափարքին) հիւսիս-արեւելք եւ Մուշից հարաւ-արեւելք տարածուող լեռնաշխարհում, յետագային կրում է Սանասունք կամ Սասուն եւ Խուրթացիք կամ Խոյթք անունները։ Եւ սակայն Խոյթ իսկապէս երկրի անունն է, այն ինչ՝ ժողովրդի իսկական անունը, ինչպէս որ մենք ալ — Բալատորիից տեղեկանում ենք, ալ Ա(Օ)րտան էր։ Իրականին մէջ Խոյթ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հին Խալդ անուան ձեւափոխութիւնը՝ համաձայն հայերէնի հնչիւնաբանական կանոնների (համեմատել Բ (խ) աւդեայ — Գուշակ եւ Խաղտեայ (f) — խալդեր ձեւերը)։ Նշանակում է՝ ցեղային հին անունը (Խալդ) դարձել է երկրի անունը, իսկ երկրի հին անունը—ցեղային անուն (Օրտան)։ Քսենոփոն եւս (Նահանջ Բիւրոց) հանդիպել է անկախ եւ ռազմիկ խալդերին, որոնք Օրոնտաս (հայերէն՝ Երուանդ) Սատրապի բանակում ծառայում էին որպէս վարձկան զինուորներ, այն է՝ Կենտրիտէս (Բոհտան-սու)